ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Դուստր Մարիաննա» ՍՊԸ

2020թ. դեկտեմբերի 31-ին
ավարտվող տարվա համար

հազար դրամ

ԱԿՏԻՎ	ծնթգ	31.12.2020թ.	31.12.2019թ.
1. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4,1	8 555 204	7 374 377
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ		912 151	1 006 169
Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ		396 292	122 423
Ոչ նյութական ակտիվներ	4,2	12 743	13 155
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	4,3	588 727	500 626
Հետաձգված հարկային ակտիվ		4 639	4 023
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**10 469 757**	**9 020 773**
2. Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	4,4	1 482 215	1 677 774
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	4,5	1 213 604	1 266 263
Ընթացիկ շահութահարկի գծով կանխավճար			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4,6	194 865	124 169
Այլ ընթացիկ ակտիվներ			301
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**2 890 684**	**3 068 506**
Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ			
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**13 360 441**	**12 089 280**

ՊԱՍԻՎ			
1. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի զուտ գումար	4,7	100 050	50
Կուտակված շահույթ		-1 456 623	-722 876
Սեփական կապիտալի այլ տարրեր		5 719 022	5 235 700
Ընդամենը սեփական կապիտալ		**4 362 449**	**4 512 874**
2. Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ	4,8	8 536 075	7 130 699
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**8 536 075**	**7 130 699**
3. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ վարկեր	4,9	0	23 985
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4,10	353 573	357 528
Շահութահարկի գծով պարտավորություն		82 571	44 076
Պահուստներ	4,11	25 773	20 117
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**461 917**	**445 706**
Օտարման խմբում ներառված որպես վաճառքի համար դասակարգված պարտավորություններ			
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**13 360 441**	**12 089 280**

Տնօրեն Տ.Ժ.Վարդանյան

Գլխավոր հաշվապահ Հ.Ա.Մելքոնյան

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Դուստր Մարիաննա» ՍՊԸ

2020թ. դեկտեմբերի 31-ին
ավարտվող տարվա համար

հազար դրամ

Ցուցանիշի անվանումը	ծնթգ	31.12.2020թ.	31.12.2019թ.
Շարունակվող գործունեությունից			
Հասույթ	4,12	7 418 057	7 035 059
Վաճառքի ինքնարժեք	4,13	-5 668 486	-5 304 212
Համախառն շահույթ (վնաս)		**1 749 572**	**1 730 847**
Այլ եկամուտներ	4,14	120 277	52 524
Վարչական ծախսեր	4,15	-405 011	-378 157
Այլ ծախսեր	4,16	-1 172 671	-1 087 422
Ֆինանսական ծախսեր	4,17	-884 876	-676 643
Շահույթ (վնաս) մինչև հարկումը		**-592 709**	**-358 851**
Շահութահարկի գծով ծախս	4,18	-123 003	-105 775
Տարվա շահույթ(վնաս) շարունակվող գործունեությունից		**-715 713**	**-464 626**
Ընդհատված գործունեության զուտ շահույթ (վնաս)			
Ընդամենը տարվա շահույթ (վնաս)		**-715 713**	**-464 626**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունքներ		**-715 713**	**-464 626**

Տնօրեն Տ.Ժ.Վարդանյան

Գլխավոր հաշվապահ Հ.Ա.Մելքոնյան

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Դուստր Մարիաննա» ՍՊԸ

2020թ. դեկտեմբերի 31-ին
ավարտվող տարվա համար

հազար դրամ

I. Նախորդ տարի (ժամանակաշրջան)

	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ (վնաս)	Սեփական կապիտալի այլ տարրեր	Ընդամենը
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2018թ.	**50**	**(220 622)**		**(220 572)**
Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը		(37 628)		(37 628)
Վերահաշվարկված մնացորդը	**50**	**(258 250)**		**(258 200)**
Հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(464 626)		(464 626)
Սեփական կապիտալի հետ այլ գործարքներ			5 235 700	5 235 700
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**50**	**(722 876)**	**5 235 700**	**4 512 874**

II. Ընթացիկ տարի (ժամանակաշրջան)

Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	**50**	**(722 876)**	**5 235 700**	**4 512 874**
Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը		-18 034		-18 034
Վերահաշվարկված մնացորդը	**50**	**(740 910)**	**5 235 700**	**4 494 840**
Հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(715 713)		(715 713)
Բաժնեմասի թողարկում	100 000			100 000
Սեփական կապիտալի հետ այլ գործարքներ			483 322	483 322
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**100 050**	**(1 456 623)**	**5 719 022**	**4 362 449**

Տնօրեն Տ.Ժ.Վարդանյան

Գլխավոր հաշվապահ Հ.Ա.Մելքոնյան

«ԴՈՒՍՏՐ ՄԱՐԻԱՆՆԱ» «ДУСТР МАРИАННА» «DOUSTR MARIANNA» 01815543

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
«Դուստր Մարիաննա» ՍՊԸ
2020թ. դեկտեմբերի 31-ին
ավարտվող տարվա համար

հազար դրամ

Հոդվածի անվանումը	31.12.2020թ.	31.12.2019թ.
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից մուտքեր	8 719 678	8 222 931
Գործառնական այլ գործունեությունից մուտքեր	1 458	526
Ընդամենը մուտքեր	***8 721 136***	***8 223 457***
Նյութերի, ապրանքների ձեռք բերման գծով ելքեր	4 969 810	5 536 028
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով ելքեր	889 263	986 365
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	436 960	445 281
Վճարումներ բյուջե	900 024	589 844
Գործառնական այլ գործունեությունից ելքեր	1 249 196	1 594 377
Ընդամենը ելքեր	***8 445 253***	***9 151 895***
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	***275 883***	***-928 438***
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Տրամադրված փոխառությունից		
Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր	***0***	***0***
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռք բերման գծով	1 098 712	1 166 960
Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր	***1 098 712***	***1 166 960***
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	***-1 098 712***	***-1 166 960***
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Սեփական կապիտալի գործիքների թողարկումից և վերավաճառքից	100 000	
Ստացված վարկերից և փոխառություններից	2 341 205	2 715 744
Ընդամենը ֆինանսական գործունեությունից մուտքեր	***2 441 205***	***2 715 744***
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Ստացված վարկերի և փոխառությունների մարումից	1 474 768	513 688
Վճարված շահաբաժիններ և տոկոսներ	86 507	99 787
Ընդամենը ֆինանսական գործունեությունից ելքեր	***1 561 275***	***613 475***
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	***879 930***	***2 102 270***
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	***57 102***	***6 872***
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	***13 594***	***-1 496***
Դրամական միջոցների մնացորդը տարվա սկզբին	***124 169***	***118 793***
Դրամական միջոցների մնացորդը տարվա վերջին	***194 865***	***124 169***

Տնօրեն Տ.Ժ.Վարդանյան

Գլխավոր հաշվապահ Հ.Ա.Մելքոնյան

«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ
ՀՀ,ք.Երևան 0010
Տիգրան Մեծ 4
Հեռ. +374 10 524 724

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Դուստր Մարիաննա»
սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ղեկավարությանը

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Դուստր Մարիաննա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները,որոնք ներառում են առ 31-ի դեկտեմբերի 2020թ. ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը,նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի,սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները,ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները,ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության ***«Վերապահումով կարծիքի հիմք»*** բաժնում նկարագրված հարցի ազդեցության,կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը ու դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Վերապահումով կարծիքի հիմք

Մենք նշանակվել էինք Ընկերության աուդիտոր 2020թ. դեկտեմբերի 31-ից հետո, հետևապես, հնարավորություն չենք ունեցել հետևելու պաշարների գույքագրման գործընթացին տարվա վերջում:
Մենք անկարող էինք իրականացնել այլ ընտրանքային ընթացակարգեր, որպեսզի ինքներս համոզվեինք 2020թ պաշարների մնացորդների ճշտությանը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են **1 482 215** հազար դրամ գումարով:

Աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության ***«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»*** բաժնում:
Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի Էթիկայի կանոնագրքի(ՀԷՄՄԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՄԽ

կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար,որն ըստ ղեկավարության,անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը,ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի,երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը,ընդհատել դրա գործունեությունը,կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն,որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից,անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից,և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է,բայց այն չի երաշխավորում,որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը,երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական,երբ խելամտորեն կարող է ակնկալվել,որ դրանք առանձին կամ միասին վերցրած,կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն:
Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը,նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով,և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ,որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է ,քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը,քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն,զեղծարարություն,միտումնավոր բացթողումներ,սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- Ձեռք ենք բերում աուդիտին առընչվող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և՝ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը,ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.

- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ,և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝գնահատում ենք թե՛ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն,որը կարող է էական կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե եզրահանգում ենք,որ առկա է էական անորոշություն,ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին,կամ,երբ այդպիսի բացահայտումները բավարար չեն,ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա:

  Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը՝ դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը,կառուցվածքն ու բովանդակությունը,ներառյալ՝ բացահայտումները,ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

  Կառավարման օղակներում գտնվող անձանց,ի թիվս այլ հարցերի,հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների,ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի,ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

29 հունիս, 2021թ.

«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ

Տնօրեն Ա. Բաբայան

Աուդիտոր Դ. Խաչատրյան

02591995
«ՓԵՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ»
"ПЕРФЕКТ АУДИТ"
"PERFECT AUDIT"